




ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

«... Էր Անի բազմամբոխ քաղաքն լցեալ բիր բիրուց արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ հիացումն արկաներ տեսողացն ... և լայնս ատուր հազար ու մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի»

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, ԺԲ դար

Միջնադարյան Հայաստանի նշանավոր մայրաքաղաք Անին շուրջ մեկ ու կես դար է, ինչ իր վրա է գրավել թե՛ հայ և թե՛ օտար բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը, որի արդյունքում ստեղծվել է անհագիտական պատկանելի գրականություն: Դրա մեջ նշանակալից մաս են կազմում հատկապես քաղաքի ճարտարապետությանը, այդ թվում՝ առաջին հերթին եկեղեցական ճարտարապետությանը նվիրված հետազոտությունները¹: Դեռևս քաղաքի պեղումներից առաջ, բայց առավել՝ պեղումների շրջանում (1892—1917) և հետագայում, Անիի եկեղեցիները դարձան համակողմանի գիտական ուսումնասիրության առարկա: Քաղաքի համայնապատկերի վրա երևացող մի քանի կանգուն կառույցներից բացի, Ն. Մառի գլխավորած պեղումները երևան հանեցին բազմաթիվ նոր ուշագրավ եկեղեցական շինու-

¹ Անիին և նրա եկեղեցիներին վերաբերող ընդարձակ գրականությունից նշում ենք միայն մի քանի հիմնական աշխատություններ. **Ղ. Ալիշան**, Ծիրակ, Վենետիկ, 1881, **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Երևան, 1942, հ. Բ, Երևան, 1948, **Վ. Հարությունյան**, Անի քաղաքը, Երևան, 1964, Դիվան հայ վիմագրության, պր. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, **Орбели И.**, Краткий путеводитель по городу Ани, СПб., 1910, նույնի՝ Избранные труды. Ереван, 1963 (մեր հղումները կատարված են այդ հրատարակությունից), տես նաև «Անի», 1992, № 2, **Н. Марр**, Ани, книжная история города и раскопки на месте городища. Л.—М., 1934, **Д. Кипшидзе**, Пещеры Ани, Ереван, 1972, **Ani (Documents of Armenian architecture, No. 12)**, Milano, 1984 և այլն:

հու ավարտած Մայր տաճարը (Մեծ Կաթողիկեն), Գագիկ Ա-ի հիմնած Ս. Գրիգոր (Գագկաշեն) հսկա եկեղեցին և Ս. Գևորգ վկայարանը՝ Հոռոմոսում, Հովհաննես Սմբատի կառուցած Ս. Հովհաննես եկեղեցին (ընդարձակ գավիթով) դարձյալ Հոռոմոսում:

Եկեղեցաշինարար ազնվականության մեջ հատկապես մեծ է Պահլավունյաց տան ներդրումը: Աբուղամրի որդի Գրիգոր Պահլավունին (Ժ դար) կառուցել է Աբուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցին, նրա տիկնոջն է վերագրվում Ս. Հակոբ (Ծուշան Պահլավունու) եկեղեցու կառուցումը: Այս բարեպաշտ ամուսինների բազում առաքինությունների ու նաև եկեղեցաշինական գործունեության մասին ուշագրավ վկայություն է պահպանվել նրանց համբավավոր թոռներից մեկի՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերում⁴:

Պակաս գործունյա չէր Գրիգոր Պահլավունու որդին՝ Աբլղարիբ մարգապանը, որը 1036 թ. Անիում հիմնել է Ս. Փրկիչ եկեղեցին, իսկ հոր կառուցած եկեղեցու մոտ՝ Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր մատուռները (1040 թ.), նվիրատվություններ կատարել Ս. Հակոբ (Ծուշան Պահլավունու) եկեղեցուն և այլն⁵: Գրիգորի որդիներից մյուսը՝ քաջակորով Վահրամ սպարապետը, հիմնադրել է Մարմաշենի վանքը:

Պահլավունիներին է վերագրվում նաև Անիի Ս. Առաքելոց եկեղեցու կառուցումը: Այս ազնվականական տնից էր Սիթի իշխանուհին, որը նորոգել է քաղաքի Ս. Սարգիս (Սիթի Պահլավունու) եկեղեցին ԺԳ դարի սկզբներին: Հիշյալ շրջանում Պահլավունիներն էին զբաղեցնում Անիի եպիսկոպոսական Աթոռը:

Բագրատունյաց Անիում ազնվականական տոհմական եկեղեցիներ են կառուցել նաև ուրիշները, բայց ցավոք սկզբնաղբյուրները չեն պահպանել նրանց անունները: Օրինակ, այսպես կոչված «Շախմատային» եկեղեցու պատի մեջ օգտագործված ավելի հին եկեղեցու քարերի վրա եղած շինարարական արձանագրությունում չի պահպանվել կառուցողի անունը, բայց, դատելով արձանագրության ոճից ու մանրամասներից, վերջինս ազնվականական ծագում ունեցող մեկն էր⁶:

ԺԳ դարի սկզբներին Անիի Ներքին բերդում Աստվածածնին նվիրված եկեղեցի է կառուցել Զաքարե ամիրսպասալարը: Վերջինս ընդհանրապես շատ մեծ նպաստ է բերել հայ եկեղեցաշինությանը: Պատահական չէ, որ «Պատմութիւն քաղաքին յԱնույ» երկի անանուն հեղինակը գրում է, թե Զա-

⁴ Մագիստրոսը Գրիգորի ու նրա Ծուշան տիկնոջ մասին գրում է. «Նոքա իսկ կենդանի վկայք Բանին Աստուծոյ... որ և յիրեանց իսկ կենցաղավարութեանն ամենայն բարեգործութեամբ կատարեալ և մաքրական վարութ... մինչ ընդ նոսա ոչ վանս այսպիսի և մայրաքաղաքս և ոչ ուսումնասիրութիւնս և ոչ ազատութիւնս քահանայական և ոչ շինութիւնս եկեղեցեաց. քանզի սոքա արծարծեցին զկարգ և զօրէնսդրութիւնս մեծին Սահակայ... և զվանս նորագոյնս շինեալ բազումս և զաւերեալսն նորոգեալ և այս անթիւս...»: Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 42—43:

⁵ Դիվան..., էջ 33, 49: Ս. Փրկիչ և Ս. Հակոբ (Ծուշան Պահլավունու) եկեղեցիների երկու արձանագրություններ վկայում են, որ Աբլղարիբն էր տնօրինում Պահլավունյաց տան եկեղեցիները այս կամ այն քահանայական տանը հանձնելու գործը (Անի քաղաքի հոգևորականությունը, «Էջմիածին» 1994, Բ, էջ 56): Աբլղարիբը երախտագիտությամբ է հիշվում Արթիկի մոտ գտնվող Պեմզաշեն (Մահմուդջուղ) գյուղի եկեղեցու մոտերքում Սարգիս կրոնավորի 1036 թ. կանգնեցրած խաչքարի արձանագրության մեջ, որից Թ. Թորամանյանը, նշվ. աշխ., հ. Բ, էջ 244):

⁶ Դիվան..., էջ 57:

քարեն «... որ աշխարհ որ տիրեաց՝ ելից զայն եկեղեցեօք Քրիստոսի Աստուծոյ...»⁷:

Անիում եկեղեցիներ են կառուցել ու նորոգել նաև հոգևորականները: «Պալատական» եկեղեցու երկու վիմագրեր հավաստում են, որ այն կառուցել է Աբխաղոմ վարդապետը⁸, իսկ Վարդան Արևելցու վկայությամբ, մայրաքաղաքում աթոռակալելուց հետո Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը «առնթեր Կաթողիկէին Անույ» հիմնադրել է «վկայարան սրբոց Հոսիսիմեանց»⁹: 1151 թ. անեցի Սարկավագ քահանան հիմնովին («ի հըմանէ») նորոգել է քաղաքի Ա. Սարգիս (Սարկավագի) եկեղեցին, 1193-ին Տրդատ քահանան ու նրա կին Խուշուշը նորոգել են Ա. Փրկչի եկեղեցին, կառուցել ժամատուն¹⁰:

Անիի եկեղեցաշինարարների մեջ թերևս ամենից մեծ թիվ է կազմել ունևոր և միջին եկամուտի տեր քաղաքային դասը: 1215 թ. նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցը Ա. Աստվածածին հին մատուռի տեղում կառուցել է Գրիգոր Լուսավորչի գեղաշեն եկեղեցին և կից՝ վանական համալիր: Եկեղեցու շինարարական ընդարձակ արձանագրության մեջ Հոնենցը հայտնում է, որ նորոգել է նաև քաղաքի Բեխենց վանքը¹¹: Ծաղկոցաձորի այրերից մեկում պահպանվել է նրա տոհմական տապանատունը՝ զարդարված որմնակարներով: Տիգրան Հոնենցին է վերագրվում Անիի, այսպես կոչված, «Կուսանաց վանքի» շինարարությունը: Բարեգործ անեցին նվիրատվություններ է կատարել նաև Մայր տաճարին (նորոգել է աստիճանները՝ 1213 թ.), Հոռոմոսի, Խժկոնքի վանքերին:

Ծեղդադյանների օրոք 1165 թ. քաղաքի Ա. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցին նորոգել է Հայրապետ անունով անեցին¹²: 1217-ին Հովհաննեսի դուստր Հոռոմ տիկինը, որդու՝ Զարիշահի հետ նորոգել է քաղաքի Ա. Աստվածածին («Հոռոմ տիկնոջ») եկեղեցին¹³: ԺԳ դարի կեսերին Հոգևորենց (Հոգետորեանց) Առյուծը սալահատակել է Ա. Առաքելոց եկեղեցու գավիթը¹⁴ (հիշվում է նաև Հոռոմոսում՝ 1251 թ.), իսկ նույն դարի 70-ական թվականներին Ուքան Քարիմադինը, Պապքան Վախրադինը և Դապտա Խավականներին Ուքան Քարիմադինը, Պապքան Վախրադինը և Դապտա Խավականներին թունը կառուցել են քաղաքի, այսպես կոչված, «Քարիմադինի» եկեղեցու զանգակատունը¹⁵, նորոգել Անիի արվարձանում գտնվող Կարմիր վանքը, նվիրատվություններ կատարել (բարեգործությամբ հիշվում են նաև Հոռոմոսում): 1342 թ. անեցի պարոն Ասիլը աթաբեկ Վահրամի հրամանով վերականգնել է Ա. Փրկիչ եկեղեցու գմբեթը, նորոգել նաև այլ եկեղեցիներ Անիում ու Երրակում¹⁶:

⁷ Մխիթար Անեցի, Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց (աշխատասիրութեամբ Հ. Մարգարյանի), Երևան, 1983, էջ 119:

⁸ Դիվան..., էջ 8:

⁹ Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 123 (այսուհետև՝ Վարդան Արևելցի):

¹⁰ Դիվան..., էջ 47, 56:

¹¹ Նույն տեղում, էջ 63:

¹² Նույն տեղում, էջ 54:

¹³ Նույն տեղում, էջ 66:

¹⁴ Նույն տեղում, էջ 20: *

¹⁵ Նույն տեղում, էջ 65:

¹⁶ Նույն տեղում, էջ 44, Կ. Մաթևոսյան, XIV դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, 3, էջ 111—113:

Քաղաքային դասի ներկայացուցիչներին են պատկանել Անիի տոհմական եկեղեցիների մի մասը, որոնք երբեմն հիշվում են այդ տոհմերի անուններով (Խամբուշենց, Բեխենց, Գոգոնց): Անեցիներն են իրենց անդուլ աշխատանքով կերտել քաղաքի հարակից ձորերում եղած բազմաթիվ ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները:

Կասկածից վեր է, որ մեզ են հասել անեցի եկեղեցաշինարարների միայն մի փոքր մասի անունները: Անհամեմատ ավելի շատ եկեղեցիներին կատարված նվիրատվությունների հիշատակություններն ու նվիրատուների անունները, որոնք պահպանվել են վիմագիր արձանագրություններում և մասամբ՝ ձեռագրերի հիշատակարաններում:

Այժմ տեսնենք, թե որոնք են **Անիի առաջին եկեղեցիները**:

Հնագիտական տվյալները վկայում են, որ բնակավայրի հնագույն մասը միջնաբերդն է ու նրանից հարավ՝ ժայռային հրվանդանի վրա գտնվող Ներքին բերդը (հետագայում կոչվել է Աղջկաբերդ): Հենց այս տարածքում են Անիի ամենավաղ եկեղեցիները: Դրանցից առաջինի հիմնադրումը ավանդաբար կապվել է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Վարդան Արևելցու մոտ պահպանված մի վկայություն ցույց է տալիս, որ Լուսավորչի անունն առնչվել է հատկապես Ներքին բերդի հետ (ըստ պատմիչի՝ «ասում են, թե» Լուսավորիչն է մկրտել այդ բերդում ամրացած մի համառ իշխանի)¹⁷: Իսկ ահա Ներքին բերդում գտնում ենք այս մասին եղած երկրորդ վկայությունը: Խոսքը վերաբերում է ԺԳ դարի սկզբներին Ջաքարե ամիրսպասալարի այստեղ հիմնադրած Ս. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությանը, ուր Անիի նոր տերը հայտնում է. «... կանգնեցի զարձանս վիմարդեան զմայրս լուսոյ զՍուրբ Կաթող[իկէն]... **ի մենաստանիս մերձ առ Էկեղեցե[ան], շինեալ ի Լուսավորչէն մերսէ Սրբոյն Գրիգ[որի]...**»¹⁸: Ներքին բերդում Ս. Աստվածածին եկեղեցուց բացի եղել է նաև Ս. Հովհաննէս Էկեղեցին (երբեմն այս երկուսը նույնացվում են)¹⁹, հավանաբար նաև կից մատուռներ և այս ամենը, ինչպես երևում է Ջաքարեի արձանագրությունից, կազմել են մի մենաստան: Դժվար է ասել, Լուսավորչի հիմնած եկեղեցի ասելով արձանագրողները որոշակիորեն որ եկեղեցին են նկատի ունեցել, բայց փաստն այն է, որ Ջաքարեի ժամանակ Անիի այս հնագույն քաղաքամասում Լուսավորչի ձեռքով հիմնված եկեղեցու գոյությունը կասկած չի հարուցել: Ինչ խոսք, որ Գրիգոր Լուսավորիչն իր հայրապետական շրջապայությունների ժամանակ կարող էր լինել նաև Անիում, որ հեթանոսական սրբավայր կար: Չի բացառվում, որ այն ավերվել է հենց Լուսավորչի կողմից և տեղում խաչ է կանգնեցվել, որն էլ հիմք է դարձել ապագա եկեղեցու համար: Սակայն, մյուս կողմից, այս ամենը կարող է ժողովրդական ավանդության ծնունդ լինել՝ առաջացած հատկապես այն ժամանակ, երբ Անին դարձավ մայրաքաղաք՝ թագավորանիստ (961) և կաթողիկոսանիստ (992): Ամեն եղաքում, մի բան պարզ է, որ Անիում առանձնահատուկ վերաբեր-

¹⁷ Վարդան Արևելցի, էջ 118:

¹⁸ Դիվան..., էջ 58: Կ. Բաամաջյանը հիշյալ հատվածի թերի մասում վերականգնում է՝ «...մերձ առ Էկեղեցե[ան]...» (Կ. Բաամաջյան, Հայերեն արձանագրութիւնք Անույ, Բագւայրի և Մարմաշնիու, Պարիս, 1931, էջ 42):

¹⁹ Գ. Սևոհոցյան, նշվ. աշխ., էջ 412: Այն, որ Ջաքարեի հիմնած եկեղեցին կոչվել է Ս. Աստվածածին, երևում է արձանագրության «զմայրս լուսոյ» արտահայտությունից (հմմտ. Բագւայրի Ս. Աստվածածնի մի քանի արձանագրությունները, Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 184—185):

այդ ժամանակ էլ միջնաբերդից մինչև Ամբաստան պարիսպներն ընկած տարածքի միջնամասում հիմնադրվեց Մեծ Կաթողիկեն՝ Մայր տաճարը:

Անիի եկեղեցիների ուղեցույց քարտեզին ծանոթանալուց առաջ հարկ է անդրադառնալ ևս մի հարցի, եկեղեցիների անվանումների խնդրին:

Անիի եկեղեցիները հաճախ ըստ տոհմանունների են կոչվել դեռևս միջնադարում: Օրինակ, Բագնայրի արձանագրություններից մեկում նվիրատու Խաչուտը գրում է, թե վանքին նվիրել է իր գանձագին տունը՝ «մաստ ի յԱպողամբենց Սուրբ Գրիգոր»³⁴: Մեկ այլ նվիրատու, դարձյալ Խաչուտ անունով³⁵ 1221-ին Խժկոնքի վանքին է նվիրել Անիում գտնվող իր տները. «որ ընդդէմ Գոգոնց Սուրբ Սարգսի է»:

Անիի պեղումների ժամանակ երբ հայտնաբերված վիմագրերում որևէ եկեղեցու անունը պահպանված չի եղել, ուսումնասիրողները երբեմն պայմանական անուններ են օգտագործել (օրինակ, «Շախմատային» եկեղեցի՝ ելնելով պատերի շարվածքի շախմատաձևությունից), ավելի հաճախ կիրառելով վիմագրերում եղած անձնանուններից մեկը (օրինակ՝ «Քարիմադինի», «Աբուխանմի», «Հոռոմ տիկնոջ», երբեմն էլ նույնանուն եկեղեցիները զանազանելու համար գործածել են լրացուցիչ անուններ՝ «Գագկաշեն», «Տիգրան Հոնենցի» և այլն): Դա որոշ դեպքերում շփոթությունների պատճառ է դարձել: Այս առումով հատկանշական է Ս. Գրիգոր (Խաչուտի կամ Բախտաղեկի) եկեղեցին: 1892 թ. պեղումներից հայտնաբերված այդ որմնանկարազարդ ու քանդակազարդ եկեղեցին ճարտարապետության պատմաբանները սովորաբար կոչում են Բախտաղեկի եկեղեցի: Այդ անունը պահպանվել է եկեղեցու բեմի ճակատի մի անավարտ արձանագրության մեջ, որը հետևյալն է. «...աստուածաջան խորանիս յիշեսջիք ի սուրբ յաղաթս ձեր **զԽաչուտ** քահանա, ծնողսն մեր, եւ **զՄլքանն** եւ զհարազատ եղբարքս **զՀայրապետս** եւ **զԺոսան** եւս եւ **զԲախտաղեկ** եւ **զ...**»: Ինչպես տեսնում ենք, Բախտաղեկն այստեղ շատ պատահական անուն է (ընդ որում՝ իգական անձնանուն)³⁶: Եկեղեցու բուն անվանումը՝ Ս. Գրիգոր, պահպանվել է Շահեր վարդապետի 1271 թ. նվիրատվական արձանագրության³⁷ մեջ, իսկ որպես լրացուցիչ անուն, թերևս ավելի տեղին է Խաչուտի անվան օգտագործումը (այդպես է արված վիմագրերի ժողովածուում)³⁸: Բայց, ցավոք, երկու լրացուցիչ անունների կիրառումն արդեն թյուրիմացությունների պատճառ է դարձել: Գ. Ուլոհաջյանն, օրինակ, իր կազմած «Անիի եկեղեցիների համահավաք ցուցակում» նշելով ընդամենը 24 եկեղեցի, միևնույն Ս. Գրիգորը ներկայացնում է որպես երկու եկեղեցի՝ մեկ Բախտաղեկի՝, մեկ՝ Խաչուտի՝ անուններով³⁹, իսկ Թ. Հակոբյանը «անվանակոչության» շուրջ կամայական դատողություններ է անում⁴⁰:

³⁴ Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 180:

³⁵ Նույնանուն նվիրատուներ տարբեր մարդիկ են, առաջինի կն. 2 անունը Տրիանց է, երկրորդինը՝ Ավագտիկին:


³⁶ Դիվան, Ա, էջ 61, հմմտ. Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 173:

³⁷ Դիվան, Ա, էջ 60:

³⁸ Նույն տեղում:

³⁹ G. Ulukhagian, նշվ. աշխ., էջ 414:


⁴⁰ Հեղինակը գրում է. «հուշարձանը մեզ հայտնի է երեք անունով՝ Ս. Գրիգոր, Խաչատուրի եկեղեցի և Բախտաղեկի եկեղեցի անուններով: Այն եղել է տոհմական եկեղեցի և մեր կարծեքով ամենից ընդունելին Բախտաղեկի եկեղեցի անունն է», Անիի պատմություն, հ. Բ, Երևան, 1982, էջ 264—265: Ռուսերեն գրականությունից օգտված որոշ հեղինակներ եկեղեցին կոչում են «Բախտագեկի» (Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 66):



ԱՆԻ ԲԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ուղեցույց-քարտեզ

Հեղինակ-կազմող՝
Կարեն Մաթևոսյան
Երևան, 1994



- ✙ եկեղեցի
- ✙- - - - - մոսթա
- ✙- - - - - եկեղեցի

0 100 200 300 400 500 մ

տեղեկություններ (ծանոթագրությունները ևս աշխատել ենք չծանրաբեռնել): Եթե եկեղեցու հատակագիծը հայտնի է, ապա տեղեկությունների վերջում արվում է «Հտ.» նշումը:

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

(Բուն քաղաքի եկեղեցիները. Սմբատաշեն պարիսպներից ներս ընկած տարածք)

- 1 (109ա) «ՊԱԼԱՏԱԿԱՆ» ԵԿԵՂԵՑԻ—Ծինարարական արձանագրության համաձայն, կառուցել է Աբիսողոմ վարդապետը: Միանալ բազիլիկ է: Դատելով ճարտարապետական մանրամասներից, կառուցվել է Է դարում: Ստույգ անունը հայտնի չէ, թեև ուսումնասիրողները հաճախ Ս. Գևորգ կամ Ս. Սարգիս են կոչում¹: Հտ.:
- 2 (109ա) ՄԱՏՈՒՌ—Երկհարկանի է, կառուցված «Պալատական» եկեղեցու հյուսիսային պատին կից: Ուշ շրջանի (ԺԱ կամ ԺԳ դ.) կառույց է: Հ. Օրբելին գրում է. «պատերին կան ծեփի մնացորդներ, որմնակարի հետքերով» (էջ 16), Հտ.:
- 3 (110) ՄԻԶՆԱԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է պալատական համալիրից հարավ-արևելք: Հավանորեն կառուցվել է Բագրատունյաց շրջանում, արձանագրություններ չունի: Հտ.:
- 4 (112) Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ («արձանագրությամբ եկեղեցի» Օրբ.) Գտնվում է պալատական համալիրից հարավ-արևմուտք: Թվակիր երկու հնագույն արձանագրությունները 1201 թվականից են (Դիվան, Ա, էջ 10—11): Հտ.:
- 5 (113) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցի պարսպի մոտ» Օրբ.)—Գտնվում է պալատից հարավ, արձանագրություն չունի: Հտ.:
- 6 (114) «ԱԲՈՒԽԱՆՄԻ» ԵԿԵՂԵՑԻ («պարսպամերձ վանք» Օրբ.)—Եկեղեցին ունի «Ապուխանմ» իշխանի և Սահակ քահանայի անունով անթվական արձանագրություն (Դիվան, Ա., էջ 34)²: Ըստ Հ. Օրբելու «Եկեղեցին ոչ մեծ վանքի մաս է կազմել» (էջ 17): Բուն կառույցը հատակագծում բոլորաձև է, ունի վեց խորան: Հտ.:
- 7 (107) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ» Օրբ.)—Գտնվում է միջնաբերդի տարածքում, պալատից արևմուտք:

¹ Եկեղեցու մուտքից վեր եղած, անցյալ դարի կեսերին անհետացած ճակատակալ բարի վրա եղել է զույգ հեծյալների պատկերով մի քանդակ (հեծյալներից մեկը միգակահարում է վիշապին, մյուս հեծյալը ևս՝ միգակավոր է): Այս քանդակի շուրջ էլ հյուսվել են եկեղեցու ենթադրյալ անունները: Ղ. Ալիշանը գրում է. «ըստ ոմանց՝ յաւանդութենէ կոչին Սուրբ Գեորգ և Ս. Սարգիս» («Ծիրակ», էջ 58): Ն. Մառը եկեղեցին կոչում է Ս. Սարգիս (Ани, с. 53), Պ. Կունեոն և Ժ—Մ Թիերին կոչում են «Ս. Թորոս և Սարգիս» Ани, р. 6, 85, հայերեն թարգմանության մեջ՝ «Ա. Թադեոսի և Սարգսի» եկեղեցի՝ р. 99):

Թեև քանդակը որոշակի կովան է, բայց այժմ դժվար է ստույգ ասել, թե այն երբ է հայտնվել եկեղեցու վրա: Նրա պահպանված գծապատկերը ուշ շրջանի արվեստի դրոշմ ունի: Մեր կարծիքով, «Պալատական» եկեղեցու անունը չի կարելի բացատրապես այս քանդակի հետ կապել:

² Արձանագրությունը թերի վերծանած Կ. Բասմաջյանը այստեղ կարդացել է Եղիա բառը («...Էղըիս (') ...», էջ 112 № 109), որի պատճառով որոշ ուսումնասիրողներ եկեղեցին սխալմամբ Ս. Եղիա են կոչել (տե՛ս Ани, р. 86, G. Uluhogian, р. 412):

- 8 (117) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ («ԶԱՔԱՐԵԻ») ԵԿԵՂԵՑԻ («Ս. Գրիգոր վանք» Օրբ.)—Անիի Ներքին բերդում (Աղջկաբերդ) կառուցել է Զաքարե ամիրսպասալարը ԺԳ դ. սկզբներին: Ըստ Հ. Օրբելու եկեղեցու մոտ երևում են «մի քանի սենյակների մնացորդներ, վանքի հետքեր» (էջ 18), Հտ.:
- 9 Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ—Գտնվել է Ներքին բերդում, կառուցման ժամանակն անհայտ է: 1298 թ. այստեղ մի Ավետարան է ընդօրինակել գրիչ Եղբայրիկը (ՍՊԲ. Արևելագիտության ինստիտուտ, В 44): Ունի ԺԴ դարի վիմագրեր (Դիվան..., էջ 70):
- 10 (105) Ս. ՍԱՐԳԻՍ («ՍԻԹԻ ՊԱՀԱԼԱՎՈՒՆՈՒ») ԵԿԵՂԵՑԻ («Գալի հուշակոթողը մատուռի մոտ» Օրբ.)—Գտնվում է պալատից հյուսիս, 1210 թ. նորոգել է Սիրի իշխանուհին: Եկեղեցուն կից եղել է Ազատշահի որդի քանամյա Գալի տապանաքարը և խաչքար (Դիվան..., էջ 55—56):
- 11 (104) Ս. ՀԱԿՈԲ («ԸՈՒՇԱՆ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ») ԵԿԵՂԵՑԻ («Աբղարիքի փոքրիկ եկեղեցի» Օրբ.)—1037 թ. կառուցել է Գրիգոր Պահլավունու կինը՝ Շուշանը, կամ նրա որդին՝ Աբղարիքը³:
- 12 (102) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ («ԽԱՄԲՈՒՇԵՆՑ») ԵԿԵՂԵՑԻ—Կառուցվել է Բագրատունյաց շրջանում, հնագույն արձանագրությունը՝ 1042 թ.: Եկեղեցին «Սուրբ Աստուածածինա Խամբուշինց» է կոչվում է 1054 թ. մի արձանագրության մեջ (Դիվան..., էջ 51—53):
- 13 (101) «ՔԱՐԻՄԱԴԻՆԻ» ԵԿԵՂԵՑԻ («գեղեցիկ տաճարի ավերակներ» Օրբ.)—1912 թ. պեղված այս եկեղեցին Ն. Մառը կոչում է «մեծ եկեղեցի» համարելով քաղաքի հնագույն կառույցներից մեկը: ԺԳ դարում Ուքան Քարիմադինի և այլոց կողմից նորոգվել է, կից կառուցվել է զանգակատուն: Հտ.:
- 14 (100) «ԱՂԲԵՐԻԿԻ» ԵԿԵՂԵՑԻ («ձիթհանք շենքի ավերակներով» Օրբ.)—Աշոտյան պարիսպներից ներս գտնվող տարածքում 1912 թ. պեղված այս եկեղեցին Ն. Մառը կոչում է «փոքր եկեղեցի» (ի տարբերություն «Քարիմադինի» «մեծ եկեղեցու»): Ըստ նրա, վիմագրական բեկորներից մեկի վրա պահպանվել է 1042 թվականը: Եկեղեցին կառուցված լինելով Բագրատունյաց շրջանում, գմբեթավորվել է ավերակներից մեկի վրա պահպանվել է ոմն Աղբերիկի անունը, որից էլ վիմարից մեկի վրա պահպանվել է ոմն Աղբերիկի եկեղեցի», բայց գրերի ժողովածուում եկեղեցին կոչվում է «Աղբերիկի եկեղեցի», բայց գրքի վերջում՝ ցանկում, այն անվանված է նաև Ս. Աստվածածին (Դիվան Ա., էջ 138): Թե ինչի վրա է հիմնված այս անվան կիրառությունը, անհայտ է: Համեմայն դեպս վիմագրերում նման տեղեկություն չկա: Հտ.:
- 15 (98) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ» Օրբ.):
- 16 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է Աշոտյան պարսպի անկյունային բուրգի մեջ: Հ. Օրբելին գրում է. «Համաձայն պատմիչների բոլոր բուրգերում փոքր եկեղեցիներ էին կառուցված: Եվ իրոք, եզրերի երկու բուրգերում, որոնք մինչև այժմ միակ ուսումնասիրվածներն են, ճարտարապետ Թ. Թորամանյանը պարզեց մատուռների գոյությունը» (էջ 4):

³ Եկեղեցու դուռն բարավորի առաջին արձանագրությունը, ուր հիշվում է Շուշանը, թերի է: Նույն քարի վրա կան վերջինիս որդու՝ Աբղարիքի երկու արձանագրությունները, որից կարելի է նաև ենթադրել, թե հենց նա է եղել կառուցողը (Դիվան, Ա, էջ 49):

- 17 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է Աշոտյան պարսպի անկյունային բուրգի մեջ (տե՛ս նախորդ բացատրությունը):
- 18 (60) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ («ՀՈՌՈՄ ՏԻԿՆՈԶ») ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Աշոտյան պարսպից հյուսիս, ոչ հեռու: 1217 թ. նորոգել է Հովհաննեսի դուստր Հոռոմ տիկինը:
- 19 (56) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ. սյուն, խարիսխ և խաչքար» Օրբ.):
- 20 (53) Ս. ԳՐԻԳՈՐ («ԱԲՈՒՂԱՄՐԵՆՑ» կամ «ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ») ԵԿԵՂԵՑԻ («Ապղարիբի եկեղեցի» Օրբ.)—Կառուցել է Աբուղամրի որդի Գրիգոր Պահլավունին (Գրիգոր Ա Համգե) Ժ դարի վերջերին: Հնագույն թվակիր արձանագրությունը (994) պատկանում է Գրիգորի կնոջը՝ Ծուշանին (Դիվան, Ա., էջ 31—32): Արձանագրություն ունի նաև Գրիգորի որդին՝ Աբղարիբը: Հտ.:
- 21 Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԱՏՈՒՌ—1040 թ. կառուցել է Աբղարիբ մարզպանը Ս. Գրիգոր («Աբուղամրենց») եկեղեցուն կից, որպես հանգստարան հանգուցյալ եղբոր՝ Համգեի և քրոջ՝ Սեդայի համար: Հտ.:
- 22 Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՏՈՒՌ—1040 թ. կառուցել է Աբղարիբ մարզպանը Ս. Գրիգոր («Աբուղամրենց») եկեղեցու մոտ, որպես հանգստարան հոր՝ Գրիգորի և մոր՝ Ծուշանի համար⁴:
- 23 (67) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ» Օրբ.)—Գտնվում է քաղաքի կենտրոնական մասում:
- 24 (73) ՄԱՅՐ ՏԱՃԱՐ (ԿԱԹՈՂԻԿԵ)—Անիի գլխավոր եկեղեցին, 989 թ. հիմնադրել է Սմբատ Բ Բագրատունին, շինարարությունն ավարտել է Գագիկ Ա-ի կինը՝ Կատրամիդե թագուհին 1001 թ.⁵, ճարտարապետն է Տրդատը:
- 25 (75) ԿԱՏՐԱՄԻԴԵ ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՆԸ («Կատրամիդե թագուհու դամբարանը» Օրբ.)—Գտնվում է Մայր տաճարից արևելք: Պեղումների ժամանակ պարզվել է, որ թագուհու գերեզմանը ավելի վաղ կողոպտված է եղել (Օրբելի, էջ 40):
- 26 ՄԱՏՈՒՌ—Գտնվել է Մայր տաճարից արևելք (Օրբելի, էջ 40, Թ. Թորամանյան, հ. Ա, էջ 153):
- 27 (74) «ՈՒԹԱՆԿՅՈՒՆ» ՄԱՏՈՒՌ («մկրտարան» Օրբ.)—Գտնվում է Մայր տաճարից հարավ-արևելք: Կառույցի բնույթի վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ⁶:
- 28 (38) Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ—Կառուցվել է Ժ դ. վերջերին, կամ ԺԱ դ. սկզբներին (հնագույն արձանագրությունը 1031 թվականից է): Եի-

⁴ Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր մատուռների մասին տե՛ս Դիվան, Ա, էջ 33, Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 165 ծան. 1, 219:

⁵ Մայր տաճարի շինարարության ավարտի թվականի շուրջ կան տարբեր կարծիքներ: Սամուել Անեցու մի վկայությունից երևում է, որ Կատրամիդեի ժամանակ կառուցվել է միայն եկեղեցու ծածկը, կամ գմբեթը (Սամուել Անեցի, Հաաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104—105):

⁶ Այս առնչությամբ Թ. Թորամանյանը գրում է. «Հ. Օրբելին Անիի կաթողիկեին հարավ-արևելյան կողմը փլած ութանկյուն մատուռը հաստատապես մկրտարան անվաներ է. արդյոք ինչի՞ հիման վրա ենթադրեր է հեղինակը, լավ կլիներ, որ բացատրեր... հաստատուն փաստ է հարկավոր այդ փլատակը մկրտարան համարելու: Վարդան Բարձրաբերդցին Անիի կաթողիկեին մոտ կհիշատակե Ս. Հռիփսիմեի մը վկայաբանին շինությունը Սարգիս կաթողիկոսի օրով... կարող է պատահել, որ այդ վկայարանը եղած լինի Հ. Օրբելիի մկրտարան կարծածը, (Թ. Թորամանյան, հ. Ա, էջ 153):

- 38 ԵԿԵՂԵՑԻ «ԵՐԿՈՒ ԽԱԶՔԱՐԵՐՈՎ»—Գտնվում է Ա. Փրկիչ եկեղեցուց հյուսիս-արևմուտք, պեղվել է 1913 թ.: Ըստ Ն. Մառի, կառուցվել է Բագրատունիների օրոք, սելջուկյան ներխուժման հետևանքով վնասվել ու որոշ ժամանակ լքված է եղել, ապա ԺԲ դարում վերականգնվել է, որի ընթացքում կառուցվել է փոքր գավիթը (Анн, с. 113—114):
- 39 (51) Ա. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ—1036 թ. կառուցել է Աբղարիբ Պահլավունին: Հատակագծում բոլորաձև՝ ութ խորանով կառույց է, ունի բազմաթիվ արձանագրություններ: Հտ.:
- 40 (78ա) ԵԿԵՂԵՑԻ
- 41 (51ա) ԵԿԵՂԵՑԻ («Եկեղեցու ավերակներ» Օրբ.):
- 42 (82) ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ («ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ») ԵԿԵՂԵՑԻ—1215 թ. կառուցել է անեցի մեծատուն Տիգրան Հոնենցը, ամբողջովին որմնակարագարդ է: Ունի գավիթ, որը կառուցվել է մի փոքր ուշ: Հտ.:
- 43 Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌ—Գտնվել է Գրիգոր Լուսավորչի («Տիգրան Հոնենցի») եկեղեցու տեղում և վերջինիս կառուցման ժամանակ (ԺԳ դարի սկզբներին) քանդվել է (Դիվան, Ա., էջ 63):
- 44 ՄԱՏՈՒՌ—Կառուցվել է Գրիգոր Լուսավորչի («Տիգրան Հոնենցի») եկեղեցու հյուսիսային պատին կից: Հտ.:
- 45 (90) ԲԵԽԵՆՑ ՎԱՆՔ («ավերակներ» Օրբ.)—Կառույցի ավերակները Բեխենց վանք է կոչում Թ. Թորամանյանը, թեև տեղում հավանորեն արձանագրություններ չեն եղել: Ըստ Գրիգոր Լուսավորչի («Տիգրան Հոնենցի») եկեղեցու արձանագրության վանքը ԺԳ դ. սկզբներին նորոգել է Տիգրան Հոնենցը (Դիվան, Ա., էջ 63): Եղել է գրչության կենտրոն (Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 125):
- 46 (92) «ԿՈՒՍԱՆԱՑ» ՎԱՆՔ—Դատելով ճարտարապետությունից ԺԳ դարի կառույց է (շինարարությունը վերագրվում է Տիգրան Հոնենցին), ունի գավիթ: Հտ.:
- 47 (35) ԵԿԵՂԵՑԻ («ավերակներ [եկեղեցու]» Օրբ.):
- 48 (16) ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՆ («Գրիգոր գործնիկի բլուր» Օրբ.)—Տեղում մատուռ-տապանատան լինելու մասին վկայում է Ն. Մառը (Анн, с. 65):
- 49 (15) Ա. ԳՐԻԳՈՐ («ԳԱԳԿԱՇԵՆ») ԵԿԵՂԵՑԻ—Կառուցել է Գագիկ Ա Բագրատունի թագավորը ըստ Զվարթնոցի ճարտարապետական ձևի: Որոշ աղբյուրների համաձայն շինարարությունն ավարտվել է 1001 թ. (այս հարցում կան նաև այլ կարծիքներ): Հտ.:
- 50 (11) «ՎԻՄԱՓՈՐ» ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Ծաղկոցաձորի ափին՝ ձորեզրից դուրս ցցված ժայռի զանգվածի մեջ: Եկեղեցին թեև ամբողջովին ժայռափոր է, բայց գտնվում է քաղաքի մյուս կառույցների բարձրության վրա: Մուտքից հյուսիս պահպանվել է 1291 թ. արձանագրություն (Դիվան, Ա., էջ 68):
- 51 (10) «ԻԳԱԶՈՐԻ» ԵԿԵՂԵՑԻ («գալարաններով եկեղեցի» Օրբ.)—Գտնվում է Սմբատաշեն պարսպի մոտ, ըստ Թ. Թորամանյանի նսիսաբագրատունյան շրջանի կառույց է (նշվ. աշխ., հ. Ա., էջ 323):

Անի մայրաքաղաք, Երևան, 1988: Բարեբախտաբար Հ. Օրբելու ուղեցույցի վերջում եղած հատակագծում կա 50 թվահամարը, որը գտնվում է իր սրամաքանական տեղում՝ 49 և 51 համարներով նշված կառույցների միջև:

- 52 (20) ԵԿԵՂԵՑԻ («մեծ տաճարի ավերակներ» Օրբ.)—Հնարավոր է, որ այս կառույցն է Անիի, Մարմաշենի և Հոռոմոսի մի քանի արձանագրություններում հիշվող Ս. Ստեփանոս եկեղեցին, որը (ըստ Հոռոմոսի արձանագրության) գտնվել է քաղաքի Կարսի դարպասի մոտ:
- 53 (24) Ս. ԳՐԻԳՈՐ («Խաչուտի») ԵԿԵՂԵՑԻ («Բախտադեկի որմնանկարազարդ եկեղեցի» Օրբ.)—Ենթադրվում է, որ ԺԱ դարի կառույց է, որը նորոգվել ու որմնանկարազարդվել է ԺԳ դարում: Արձանագրություններից մեկում պահպանվել է Ծափեր վարդապետի (նարտարապետի) անունը, որը սակայն հիշվում է որպես նվիրատու (Դիվան, Ա, էջ 60—61): Հտ.:
- 54 (26) «ՎՐԱՑԱԿԱՆ» ԵԿԵՂԵՑԻ—Հավանորեն ԺԱ դարի շինություն է, որը ԺԳ դարում անցել է Անիի քաղկեդոնական համայնքին: 1218 թ. նրա պատին ընդարձակ վրացերեն արձանագրություն է թողել Վրաց Եպիփան կաթողիկոսը: Հտ.:
- 55 (37) «ՉՈՐՍ ՄՈՒՅԹԵՐՈՎ» ԵԿԵՂԵՑԻ («մույթերով շինություն» Օրբ.)—Ծառ վաղ ծագում ունեցող (նախաքրիստոնեական) կառույց է ե-ղել, որի սկզբնական նշանակությունը պեղումների ժամանակ չի պարզվել, սակայն ինչպես Ն. Մառն է նշում, այն «վերածված է եղել եկեղեցու» (Ани, с. 53):
- 56 (33) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ» Օրբ.):
- 57 (34) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ» Օրբ.):
- 58 (40) «ԿԱՐՄԻՐ» ԵԿԵՂԵՑԻ—Արձանագրություն չունի, բայց ըստ նարտարապետական առանձնահատկությունների ԺԱ դարի կառույց է: Եկեղեցին հանգամանորեն ուսումնասիրած Ն. Տոկարսկին այն կոչում է «եզակի հուշարձան»¹⁰: Պեղումների շրջանում պայմանականորեն «Կարմիր» եկեղեցի է կոչվել ըստ օգտագործված քարի գույնի:
- 59 (47) ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Սմբատաշեն պարսպի կենտրոնական մասից ոչ հեռու:

ՄԱԲԱՏԱՇԵՆ ՊԱՐԻՍՊՆԵՐԻՅ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔ

- 60 ՄԱՏՈՒՌ—Հայտնաբերել է Միքայել վարդապետը 1908 թ.: Կից եղել են գերեզմաններ, որոնցից մեկի վրա արձանագրություն՝ «Այս է հանգիստ Ամիր Սարգսին» (արձանագրությունը դուրս է մնացել Անիի վիմագրերի ժողովածուից)¹¹:
- 61 (88) ՄԱՏՈՒՌ—Կառուցված է անմիջապես Ախուրյանի գետափին, ունի 1304 և 1328 թթ. արձանագրության հատվածներ, որոնք դուրս են մնացել Անիի վիմագրերի ժողովածուից¹²:

¹⁰ Н. Токарский, Уникальный памятник архитектуры из раскопок 1911 года в Ани, в кн. «По страницам истории армянской архитектуры», Ереван, 1973, с. 5—21

¹¹ Թ. Թորամանյանը գրելով Ախուրյանի՝ քաղաքի հանդիպակաց ափին եղած հնությունների մասին, նշում է. «Կամուրջին անմիջապես արևելյան կողմը անկեց 50, 60 քալ հեռավորության վրա գետափին, բարձրավանդակ հարմար տեղի մը վրա կառուցված է եղեր փոքր մատուռ և քահանայից բնակարան, որոց հետքերը կը նշմարվին: 1908 թ. հայր Միքայել երևան հանեց այս ավերակը և մեջը գտավ գերեզմանաբար, կարմիր քարե, օրորոցաձև քանդակված, արձանագրված...» Թ. Թորամանյան, Բ, էջ 183:

¹² Այս մատուռի մասին Թ. Թորամանյանը գրում է. «Կուսանաց վանքեն դեպի արևելք, ուղիղ գետափին շինված... փոքրիկ շինություններէ... երկրորդը... փոքրիկ մատուռ է,

- 62 ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ—Գտնվում է Ախուրյանի հոսանքն ի վեր, քաղաքի պարիսպներից շուրջ 600 մ. հյուսիս-արևելք, փոքրիկ ձորի ափին: Համաձայն շինարարական արձանագրության կառուցվել է 985 թ.: 1271-ին վանքը գնել, նորոգել ու նրան նվիրատվություններ են տվել Ուքան Քարիմադինը, Պապբան Վախրադինը և Դապտա Խաթունը, այս մասին թողնելով ուշագրավ արձանագրություն¹³:
- 63 (8) ԵԿԵՂԵՑԻ («Եկեղեցու ավերակներ» Օրբ.)—Գտնվում է պարիսպներից մինչև «Հովվի» եկեղեցի ընկած հատվածում (Թ. Թորամանյան, Բ, էջ 178):
- 64 (1) «ՀՈՎՎԻ» ԵԿԵՂԵՑԻ—Կառուցումը վերագրվում է ԺԱ դարին, արձանագրություններ չունի, անունը ծագում է ժողովրդական միավանդությունից:
- 65 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է «Հովվի» եկեղեցուց հյուսիս, կից ունեցել է գեղեցիկ մահարձան (Թ. Թորամանյան, Ա, էջ 327):
- 66 (6) ԵԿԵՂԵՑԻ («փոքր եկեղեցու ավերակներ» Օրբ.)—Գտնվում է Իգաձորից ոչ հեռու, դեպի հյուսիս:
- 67 (5) ՄԱՏՈՒՌ («մատուռի ավերակներ» Օրբ.)—Գտնվում է Իգաձորից հյուսիս (Թ. Թորամանյան, Բ, էջ 180):
- 68 (4) ԿԻՐԱԿՈՍԻ ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՆ—Երկհարկանի է, ներքևում տապանատունը, վերևում՝ մատուռը: Ունի 1330 և 1348 թթ. արձանագրություններ, որոնցից երկրորդի համաձայն շինությունը կառուցվել է նահատակված Կիրակոս վարդապետի համար (Դիվան, Ա, էջ 67):

ԺԱՅՌԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՎ ՄԱՏՈՒՐՆԵՐ¹⁴

Ծաղկոցաձոր

- 69 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է միջնաբերդի հարավային ստորոտում: Ավերվել է և ժայռաքեկորի հետ գլորվել ներքև: Պահպանվել է հյուսիսային պատը 3,45 մ երկարությամբ, երկու որմնամույթերով:

որուն արևելյան կողմի անկյան քարին վրա գրված է (Ես Յովանէս ծառայ [Աստուծոյ]... ներքև կա՝ 2ԾԳ, դիմացը գրած 2ՀԷ)» (Թ. Թորամանյան, Բ, էջ 185):

¹³ И. Орбели, Избранные... Թ. Թորամանյան, Բ, էջ 161, Բասմաջյան, էջ 86—87, Кипшидзе... էջ 152: Կարմիր վանքը և նրա արձանագրությունները անիական միջավայրի ճնշման են: Ապագայում Անիի վիմագրերի ժողովածուի վերահրատարակման ժամանակ նպատակահարմար կլինի Կարմիր վանքի արձանագրությունները ևս ներառել այդտեղ:

¹⁴ Ն. Մառի հանձնարարությամբ Անիի ձորերի քարայրները ուսումնասիրել է Դ. Ղիփշիձեն 1915 թ.: 1916-ին այս գործը ցավոք ընդհատվել է, բայց արշավախմբի մասանկիցներից Ն. Տոկարսկին որոշ աշխատանքներ կատարել է: Վաղամեռիկ Դ. Ղիփշիձեի և իր ուսումնասիրությունների համադրումով Ն. Տոկարսկին 1972 թ. հրատարակել է «Անիի քարայրները» (ռուսերեն) գիրքը (Դ. Ղիփշիձեի հեղինակությամբ և իր խմբագրությամբ ու ծանոթագրություններով): Գրքում առկա հանգամանակից ցուցակում նշված են բոլոր տեղանիկայրերը, այդ թվում ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները: Ղիփշիձեն համարակազմը կատարել է համառոտագրված, ըստ ձորերի (Ա—Ծաղկաձոր, Բ—Գալիձոր, Դ—Բ. Գաձոր, Ը—Ախուրյան), դրանց ափերի (ա. ճ. ձախ ափ—բ. ճ. աջ ափ) և ըստ լատինական նշված տեղանիստերի, որին հետևում է հուշարձանի թվային համարը: Օրինակ՝ Ա. լ. ճ. Ա/19, որը նշանակում է՝ Ծաղկաձոր, ձախ ափ, Ա տեղամաս, համար 19 քա-

- 70 ԵԿԵՂԵՅԻ—Գտնվում է միջնաբերդից արևմուտք, Անիի մեզ հայտնի բոլոր ժայռափոր եկեղեցիների մեծագույն մասի պես միանալ է, ունի կիսաշրջան խորան (չափերը՝ $4,95 \times 3,15$ մ), աչքի է ընկնում կատարման բարձր ճշգրտությամբ, Հտ. (Լ. լ. ճ. A/5, Ղիփ., էջ 26—27):
- 71 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է Արուղամբենց Ս. Գրիգոր եկեղեցուց ցած գտնվող տարածքում, պահպանվել է միայն հյուսիս-արևելյան մասը՝ խորանով (չափերը՝ 5×2 մ), (Լ. լ. ճ. C/10 Ղիփ., էջ 35):
- 72 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է Սմբատաշեն պարսպի № 95 բուրգի ստորոտում եղած ժայռային հրվանդանի մեջ, մասամբ ավերված է, ունի կիսաշրջան խորան (Լ. լ. ճ. D/7, Ղիփ., էջ 40):
- 73 ՄԱՏՈՒՌ—Ներքուստ խորանի մասում պատերը եղել են ծեփածածկ, հավանաբար նաև որմնանկարազարդ (երևացել է կարմիր ներկ), բայց մոտից չի ուսումնասիրվել, քանի որ, ըստ Ղիփշիձեի, առանց հատուկ աստիճանի այն «անմատչելի է» եղել (Լ. լ. ճ. D/13, Ղիփ., էջ 41):
- 74 ԵԿԵՂԵՅԻ—Գտնվում է «Վիմափոր» եկեղեցու (№ 50) մոտերքում, արևմրդյան մասը վնասված է (չափերը՝ մոտ. $8,90 \times 4,45$ մ), Հտ (Լ. լ. ճ. E/7 Ղիփ., էջ 44):
- 75 ԵԿԵՂԵՅԻ—Ծաղկոցաձորի՝ Իգաձորից Անիձոր ընկած հատվածում: Ունեցել է ժայռափոր փոքր գավիթ, ներքուստ, պատերին կան ծեփի հետքեր: (Չափերը՝ $2,50 \times 2,80$ մ), Հտ. (Լ. լ. ճ. F/13, Ղիփ., էջ 48):
- 76 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է նախորդ եկեղեցուց հյուսիս, ունի կիսաշրջան խորան: Ղիփշիձեն այն կոչում է «գեղեցիկ» մատուռ (չափերը՝ $4,50 \times 2,50$ մ), Հտ. (Լ. լ. ճ. F/20, Ղիփ., էջ 49):
- 77 ՄԱՏՈՒՌ—Մոտ է նախորդ եկեղեցուն, խորանն ուղղանկյունաձև է (չափերը՝ 3×2 մ), ծածկը բավական բարձր է՝ $3,50$ մ (Լ. լ. ճ. F/36, Ղիփ., էջ 51):
- 78 ԵԿԵՂԵՅԻ—Նախորդ մատուռների շարքում: Ունեցել է գավիթ, որն ավերվել է (չափերը՝ $3,5 \times 2$ մ), (Լ. լ. ճ. F/42, Ղիփ., էջ 51):
- 79 ԵԿԵՂԵՅԻ—Գտնվում է նախորդին շատ մոտ, պահպանվել է ծեփածածկ խորանը (Լ. լ. ճ. F/49, Ղիփ., էջ 52):
- 80 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է արևմտյան կողմից Ծաղկոցաձորին միացող Անի-ձորի այրերից մեկում, Կիրակոս վարդապետի մատուռ-տապանատր-ձորի այրերից մեկում, Կիրակոս վարդապետի մատուռ-տապանատր-ձորից (№ 68) շուրջ 300 մ հյուսիս: Պատերը եղել են ծեփված, առանց որմնանկարի, չափերը՝ $4,50 \times 2,50$ մ, Հտ. (Լ. լ. ճ. G/5, Ղիփ., էջ 53—54):

րայր: Ամեն մի եկեղեցու պարագայում մենք նույնությամբ վկայաբերում ենք Ղիփշիձեի համարակալումը:

Հարկ է սակայն նշել, որ որոշ դեպքերում դժվար է անսխալ կերպով որոշել եկեղեցու ճշգրիտ տեղը, քանի որ Ղիփշիձեի ու Տոկարսկու բարոնեզում արձանագրված են միայն բավական մեծ տարածք ընդգրկող տեղամասերը, բայց ոչ այրերի համարները: Այստեղ որոշ չափով օգնության են գալիս հուշարձանների նկարագրության մեջ առկա այրերի դիրքը մատնանշող օժանդակ տվյալները (որոնք մշտապես հաշվի ենք առել), բայց այնու-հետև ամենապահանջող օժանդակ տվյալները (որոնք մշտապես հաշվի ենք առել) կարող են լինել փոքր շեղումներ:

Անիի ժայռափոր եկեղեցիների ու մատուռների վերաբերյալ անհամեմատ քիչ բան է հայտնի, քան վերգետնյա կառույցների մասին, ուստի մեր ցուցակում աշխատել ենք հնարավորին չափ շատ տեղեկություններ ներմուծել (այդ թվում՝ նշելով չափերը, եթե դրանք հայտնի են):

- 81 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է նախորդ մատուռի մերձակայքում, եռանավ է և յուրաքանչյուր նավ ունի համապատասխան խորան: Պատերը ծեփածածկ են, մասամբ ավերված (Լ. լ. ճ. G/9, Ղիփ., էջ 54—55):
- 82 ՄԱՏՈՒՌ—Նախորդների մոտ, կիսավեր է, Հտ. (Լ. լ. ճ. G/38, Ղիփ., էջ 57):
- 83 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է Ծաղկոցաձորի և Անիձորի միացման շրջանում, Անի գյուղի մոտ: Ընդհանուր կիսաշրջան խորան, պատերը ծեփածածկ են: (Լ. լ. ճ. H/7, Ղիփ., էջ 60):
- 84 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է նախորդ մատուռի մոտերքում, խորանն ուղղանկյունաձև է, ունեցել է փոքր գավիթ, (չափերը՝ $5,70 \times 3$ մ), Հտ. (Լ. լ. ճ. H/14, Ղիփ., էջ 60—61):
- 85 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է նախորդ երկու հուշարձաններից ոչ հեռու, խորանը՝ կիսաշրջան է, ունի երկու գավիթ՝ արևմուտքից և հարավից (Լ. լ. ճ. H/29, Ղիփ., էջ 62):
- 86 ՄԱՏՈՒՌ—Խորանը կիսաշրջանաձև է (Լ. լ. ճ. J/18, Ղիփ., էջ 71):
- 87 ՄԱՏՈՒՌ—Գտնվում է Ծաղկոցաձորի աջ ափին, Իգաձորի միախառնման վայրի հանդիպակաց մասում: Խորանն ուղղանկյունաձև է, կից ունի երկու տապանատուն: Խորանում կարմիր ներկի հետքեր կան, ըստ Ղիփշիձեի հավանորեն որմնանկար է եղել: Հտ. (Լ. լ. ճ. L/13d, Ղիփ., էջ 85—86):
- 88 ՏԱՊԱՆԱՏՈՒՆ (ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ ՏՈՀՄԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՏՈՒՆԸ)—Գտնվում է Ծաղկոցաձորի աջ ափին, Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցու հանդիպակաց մասում, բաղկացած է մի քանի բաժանմունքից, որոնցից մեկում ($1,70 \times 3$ մ) բավական լավ են պահպանված որմնանկարները (Բարեխոսություն, Գաբրիել և Միքայել հրեշտակապետներ), ունի ներկագիր արձանագրություններ (Դիվան, էջ 69), Հտ. (Լ. լ. ճ. M/10, Ղիփ., էջ 89, 94, 175, լսնկ. 37):
- 89 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Հոնենցի տապանատան և նրան կից եղած մեկ այլ ընդարձակ տապանատան մոտ, հատակագծով մոտենում է վերգետնյա խաչաձև փոքր եկեղեցիների տիպին: Ունի գեղեցիկ խոյակավոր որմնասյուներ, պատերը ծեփված են և սպիտակեցված: Հտ. (Լ. լ. ճ. M/17, Ղիփ., էջ 97, 98, 176):
- 90 ՎԱՆՔ—Գտնվում է Ծաղկոցաձորի աջ ափին Բագնայրի վտակի միախառնման վայրում, ընդգրկված է քարաքների բավական մեծ համալիրում: Բուն եկեղեցու չափերն են՝ $5,25 \times 3,50$ մ, հարավային մասում ունի փոքր ավանդատուն (Բ), իսկ հյուսիսում՝ բավական մեծ գավիթ (Գ)՝ $13,80 \times 8,50$ մ: Պատերին կան փորագրված խաչեր և գրադարակի խորշեր: Հտ. (Լ. լ. ճ. N/4, Ղիփ., էջ 21, 100—105, 108):
- 91 ԵԿԵՂԵՑԻ ՏԱՊԱՆԱՏՆԵՐՈՎ—Գտնվում է Ծաղկոցաձորի աջ ափին՝ միջնաբերդի հանդիպակաց մասում, ունի երկու խորան՝ արևելքից (ավելի մեծ) և արևմուտքից: Մուտքից վեր պահպանվել են կարմիր ներկով պատերի հետքեր, պատերը ծեփածածկ են: (Չափերը՝ $6,15 \times 2,45$ մ): Եկեղեցու հարավային կողմում կան երեք տապանատներ: Հտ. (Լ. լ. ճ. O/5, Ղիփ., էջ 111—112):
- 92 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է նախորդից ոչ հեռու, ունի կիսաշրջանաձև խորան, չափերը՝ $6,35 \times 2,50$: Հտ. (Լ. լ. ճ. O/6, Ղիփ., էջ 112—113):
- 93 ՎԱՆՔ—Գտնվում է Ծաղկոցաձորի աջ ափին, միջնաբերդի դիմաց, ընդ-

գրկելով բավական ընդարձակ ժայռափոր համալիր, որի արևելյան կողմում կիսավեր եկեղեցին է: Վերջինիս հարավային կողմում եղած կամարակապ առաստաղով սրահը հավանորեն ծառայել է որպես գավիթ (k): Եկեղեցում և համալիրի կենտրոնական մեծ սրահում կան ծեփի հետքեր: Ըստ Ղիփշիձեի, մի քանի ժայռափոր սենյակներ (b, c, d, f) վանքի խցեր են, իսկ կենտրոնական մեծ սրահը (a) հավանաբար սեղանատուն: Ուսումնասիրողների կարծիքով վանական համալիրը եղել է երկհարկ, բայց ստորին մասն ավերվել է: Հտ. (Ա. թ. ճ. Օ/15, Ղիփ., էջ 118—120):

Իգաձոր

94 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Իգաձորի աջ ափին (Անիի Պարոնի պալատից հյուսիս): Ունի կիսաշրջանաձև խորան և չնայած որ չափերով փոքր է ($4,45 \times 5,15$ մ), բայց աջ և ձախ կողմերից ունի ուղղանկյուն ելուստներ, որոնցում տեղավորված են մկրտության ավազաններ: Հտ.: (Ի. թ. ճ. A/1, Ղիփ., էջ 121—122):

95 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է նախորդից 20 քալ դեպի հարավ և հատակագծով մոտ է նրան, միայն թե մկրտության ավազանով ելուստ ունի հյուսիսային կողմից: Դռան կողքերին կան փոքր փորագիր խաչեր, եղել է նաև 14 տողից կազմված խոշոր տառերով արձանագրություն, եղել է նաև 14 տողից կազմված խոշոր տառերով արձանագրություն, որն անընթեռնելի է եղել: (Չափերը՝ $4,32 \times 4,71$ մ), Հտ. (Ի. թ. ճ. A/2, Ղիփ., էջ 123—126):

96 ՄԱՏՈՒՌ—Ունի կիսաշրջանաձև խորան (Ի. թ. ճ. A/9, Ղիփ., էջ 126):

97 ԵԿԵՂԵՑԻ—Մասամբ ավերված է, կիսաշրջանաձև խորանով (չափերը՝ $4,25 \times 2,35$ մ), ունի երկու մուտք հյուսիսից և հարավից: Արևմտյան կողմում կա մի մեծ սրահ՝ $8,90 \times 3,35$ մ, որը հավանորեն ծառայել է որպես գավիթ: Հտ. (Ի. թ. ճ. A/33, Ղիփ., էջ 127—128):

Բազմաշրիձոր

98 ԵԿԵՂԵՑԻ—Խորանը կիսաշրջանաձև է, ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից, պատերը՝ ծեփածածկ, չափերը՝ $4,50 \times 2,30$ մ: (Ե. լ. ճ. B/6, Ղիփ., էջ 133):

99 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է նախորդի հարավային կողմում և չափերով մոտ կրկնակի անգամ գերազանցում է նրան: Ունի կիսաշրջանաձև խորան: (Ե. լ. ճ. B/7, Ղիփ., էջ 133—134):

1000 ԵԿԵՂԵՑԻ—Մոտ է նախորդ երկուսին, խորանը կիսաշրջանաձև, հարավային կողմից ունի տապանատուն (չափերը՝ $8,20 \times 4,50$ մ): Հտ.: (Ե. լ. ճ. C/12, Ղիփ., էջ 134—135):

101 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է ժայռափոր համալիրի արևելյան կողմում, խորանն անկյունավոր է, ունի մուտքեր արևմուտքից և հարավից: Հտ.: (Ե. լ. ճ. C/22, Ղիփ., էջ 136):

Ախուրյանի կիրճ

102 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Ախուրյանի և Անի գետակի միախառնման վայրից արևելք ընկած ձորեզերքի այրերից մեկում, չափերը՝ $3,40 \times 2,15$ մ, ունի փոքր գավիթ (X. թ. ճ. H/30, Ղիփ., էջ 158):

Գալիձոր

103 ԵՐԿԽՈՐԱՆ ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Գալիձորի աջ ափին, Սմբատաշեն պարսպից ոչ շատ հեռու: Խորաններ ունի արևելյան և արևմտյան շեն պարսպից ոչ շատ հեռու: Խորաններ ունի արևելյան և արևմտյան կողմում, առաջինի բոլորակը ունի վեց կիսաշրջան խորշեր (ինչպիսիք կան Անիի Մայր տաճարի ավագ խորանում), չափերը՝ $7,10 \times$

4,10 մ, Հտ. (Բ. II. Ծ A/20, Ղիփ., էջ 161—162, Թ. Թորամանյան, Բ, էջ 182):

104 ԵԿԵՂԵՑԻ—Գտնվում է Գալիձորի ձախ ափին, կիսավեր: Խորանի պատերին կան ծեփի հետքեր (Բ. II. Ծ. B/22, Ղիփ., էջ 165):

ԱՆԻԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Ա «ԼՈՒՍԱՎՈՐԶԱՀԻՄՆ» ԵԿԵՂԵՑԻ—Գտնվել է Ներքին բերդում (Աղջկաբերդ), հիմնադրությունը վերագրվել է Ա. Գրիգոր Լուսավորչին: Այս մասին է վկայում ԺԳ դարի սկզբին նույն տարածքում եկեղեցի կառուցած Զաքարե ամիրսապալարի թողած արձանագրությունը, որ ասվում է, թե նոր եկեղեցին կառուցվել է «ի մենաստանիս մերձ առ եկեղեցե[ան] շինեալ ի Լուսավորչէն մերմէ Սրբոյն Գրիգ[որի] (Դիվան, Ա, էջ 58):

Բ ՓՈԲՐ ԿԱԹՈՂԻԿԵ—Ըստ Ասողիկի պատմության ձեռագրերից մեկում արված հավելումի այս եկեղեցին կառուցել է Աբաս Բագրատունին (928—953). «Սա շինէ եւ զՓոքր Կաթողիկէն Անույ...» (Ասողիկ, էջ 172):

Գ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ—Այս անվամբ է կոչվում Անիի թագավորական տան եկեղեցին (բնագրում՝ վանքը) Աշոտ Գ Ողորմածի (953—977) դրստեր՝ Հռիփսիմեի՝ Ս. Նախավկայի (Մաղարդա) վանքին տրված կրտակագրում (Գ. Հովսեփյան, Յիշատակարանք..., էջ 142)¹⁵:

Դ Ա. ՍՏԵՓԱՆՈՍ—Եկեղեցին հիշատակվում է Մարմաշենի 1225 թ., Անիի Ս. Առաքելոցի 1239, 1288 թթ. և Հոռոմոսի մի անթվական արձանագրություններում: Ըստ վերջին վկայության այն գտնվել է քաղաքի Կարսի դարպասի մոտ: Եկեղեցին ենթադրաբար կարելի է նույնացնել Հ. Օրբելու ուղեցույցի 20 թվահամարով նշված կառույցի հետ, որն անվանված է «մեծ տաճարի ավերակներ» (մեր ցուցակում՝ № 52):

Ե—Զ Ա. ԳՐԻԳՈՐ եւ Ս. ՍԱՐԳԻՍ—Անիի այս երկու եկեղեցիները հիշվում են Թերան Անեցու 1246 թ. հիշատակարանում, որ նա հայտնում է, որ մի Տոնական է նվիրել Ա. Գրիգորին, բայց քանի որ մատյանը

¹⁵ Ըստ կտակագրի, որի ստույգությունը ստուգելի է, Հռիփսիմե արքայադուստրը, հիվանդ լինելով, գալիս է Մաղարդավանք՝ սրբություններից բժշկություն գտնելու համար: Մեկ ամիս այստեղ մնալուց հետո փորձում է վերադառնալ («...ելի դառնալ ի յաւանսն մեր ի քաղաքն Անի»), բայց չի կարողանում («հասեալք ի գեղն Աստապատ անկայ ի մահիճս հիւանդութեան»): Մահից առաջ գրում է հիշյալ կտակը, որով Աստապատ գյուղը, որպէս «յիշատակ հոգոյ» նվիրում է Ս. Նախավկայի վանքին, միաժամանակ նամակով դիմում է հորը, խնդրելով այդ նվիրատվության փաստն արձանագրել «ի վերայ վիմի միոջ... զանգակատան վանից մերոց Սրբոյ Յովհաննէսին...»: Ցավոք, եթե անգամ եղել է նման կրտակ, այն հետագայում անհարկի միջամտությունների է ենթարկվել: Ծիշտ չէ կտակագրի թվականը՝ 981, քանի որ Աշոտը մահացել է 977-ին: Սակայն չորս անգամ գրված թվականը մի դեպքում հետևյալն է. «ի թուին Փրկչին ԹՃ և ՀԷ (977)»: Անիում Ս. Հովհաննէս անունով երկու եկեղեցի է հայտնի, մեկը Ներքին բերդում (№ 9), մյուսը՝ միջնաբերդում (№ 4), բայց հավանորեն եղել են նաև ուրիշները (տես ներկա ցուցակը՝ Է): Եթե ներ ենթադրել թե Ս. Հովհաննէսի վանք ասվածը Հոռոմոսի վանքն է, որի գլխավոր եկեղեցին (Հովհաննէս Սմբատի կառուցածը) հենց այդ անունով էր կոչվում, իսկ վանքում գտնվում էր Բագրատունիների տոհմական հանգստարանը (գերեզմանոցը):

Սուրբ Անտարան... ի քաղաքիս յԱնի, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգայ զորավարի...» (Մատենադարան, № 4515, էջ 106):

ԺԳ. Ս. ՄԻՆԱՍ—Ն. Մառի ծոցատետրերից մեկում պահպանվել է այս եկեղեցու համառոտ նկարագրությունը, ըստ որի այն ներքուստ ունեցել է սվաղով կիսով չափ ծածկված 1013 թ. հայերեն արձանագրություն և ԺԳ դարի որմնանկարներ՝ վրացերեն մակագրություններով: Կարծում ենք, որ եկեղեցին, առանց անվան, նշված է Անիի հատակագծում, բայց թե որն է և ինչու է Ն. Մառն այն Ս. Մինաս կոչում, անհայտ է (Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 61—62, ծան. 91):

ԺԴ. «ԱՆԱՊԱՏ»—Որ Անիի վանքերից մեկը նաև այս անունով է կոչվել երևում է Գրիգոր Լուսավորչի (Տիգրան Հոնենցի) եկեղեցու մի արձանագրությունից, ուր հիշվում է ոմն տէր Ներսես, որպես «անապատին իպիսկոպոս» (Դիվան, Ա, էջ 64): Իսկ Բեխենց վանքի ձեռագրերից մեկի ԺԳ դարի սկզբների հիշատակարանում նշվում է «զմիակեցն զՍիմէոն, որ բնակէր յանապատի...» (Մատենադարան, № 5554, էջ 7ա):

Անիի եկեղեցիների սույն թվարկումն իրավամբ կարելի է լրացնել նաև Հոռոմոսի, Բագնայրի, Արջո Առինի բազմաթիվ եկեղեցիների նշումով, քանի որ այդ վանքերը ամենասերտ վարչատարածքային և հոգևոր-մշակութային կապերի մեջ էին Անիի հետ և ըստ որոշ հետազոտողների հանդիսանում էին քաղաքի հեռավոր արվարձանները: Սակայն սահմանափակվենք ներկայացված ցուցակով, մանավանդ որ քարտեզ-ուղեցույցի ընդգրկման բնավորություններն էլ այդ են թելադրում:

ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՐՅԸ

Մենք արդեն ծանոթացանք Անիում մինչև մեր հարյուրամյակը կանգուն կամ ավերակ վիճակում պահպանված և կամ տարբեր սկզբնաղբյուրներում հիշատակված եկեղեցիներին, համոզվելով, որ քաղաքում դրանք իրոք շատ մեծ թիվ են կազմել¹⁷: Սակայն, այնուամենայնիվ, քանի՞ եկեղեցի է եղել Անիում: Այս հարցը մեզ և այլ ուսումնասիրողների գուցե առանձնապես չհետաքրքրեր, եթե թե՛ հայ և թե՛ օտար միջնադարյան մի շարք հեղինակների մոտ պահպանված չլիներին քաղաքում հազար կամ հազար ու մեկ եկեղեցիների գոյության մասին եղած վկայություններ: Ուսումնասիրողներից մի քանիսն այդօրինակ վկայությունները համարել է իրականության արտա-

¹⁷ Մեր կազմած ցուցակը, բնականաբար, չի կարող ամբողջական լինել, քանի որ նախ Անիի պեղումներն անավարտ մնացին, երկրորդ, դեռևս հետազոտման շրջանում քաղաքի ոչ բոլոր հուշարձաններն են գրանցվել: Մասնավորապես մատուռները մեծ մասամբ դուրս են մնացել Հ. Օրբելու ուղեցույցից: Օրինակ, մի առիթով Թ. Թորամանյանը գրում է, որ միայն նոր քաղաքի տարածքում կարելի է հարյուրից ավելի եկեղեցի ու մատուռ հաշվել («Առաքելոց եկեղեցիի արևմտյան կողմի ձորեզրեն սկսյալ մինչև Լուսավորչի (Տիգրան Հոնենցի, Կ. Մ.) եկեղեցի և Գլիձորի եզերքները... շքեղ արվեստագործությամբ կանգնված շատ ավելի կարելի է համրել այս տարածության վրա եկեղեցիներու և մատուռներու մնացորդներ...», Թ. Թորամանյան, Բ, էջ 50): Մինչդեռ Օրբելու ուղեցույցին հետևելով, հիշյալ տարածքում այդ թիվը հազիվ երկու տասնյակ է կազմում:

Այժմ ժամանակագրական կարգով, մեկ սու մեկ ներկայացնենք այն վր-
կայությունները, ուր ճշվում է Անիի եկեղեցիների թիվը:

1981, 12 220:

4 Անանուն Վրաց պատմիչը (ԺԳ դ. սկիզբ) «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» երկում, խոսելով 1161 թ. Վրաց Գիորգի թագավորի կողմից Անիի գրավման մասին, գրում է. «... ուղղվեց դեպի մեծ քաղաք Անիսին, որն անցյալում մի ժամանակ հույների թագավորների տունն ու նստոցն էր և որտեղ մինչև այժմ էլ հազար ու մի եկեղեցի կա»²³:

5 Սիրթ իբն ալ-Ջավզի արաբ պատմագիրը (ԺԳ դար), Անիի 1064 թ. գրավմանն անդրադառնալով, նշում է, որ քաղաքում կար հազար եկեղեցի ու վանք (ավելացնում նաև, որ Անին ուներ 700 հազար տուն, իսկ սելջուկները գերեցին 50 հազար մարդ)²⁴:

6 Աբուլ ֆարահ (Բար Հեբրեոս) ասորի պատմիչը (ԺԳ դար), գրում է, թե Անիում 1000 եկեղեցի կար²⁵:

7 Վինսենտ դը Բովե (1190—1264) Դոմինիկյան միաբանն իր կազմած հանրագիտարանում Անիի մոնղոլական զավթման կապակցությամբ գրում է. «Հայաստանում կա մի հոյակապ քաղաք Անի անունով, ուր կա հազար եկեղեցի և 100000 ընտանիք է բնակվում»²⁶:

8 Ուիլիամ Ռուբրուք Ֆրանցիսկյան միաբանը 1255 թ. Անիում գտնվելով իր ուղեգրության մեջ գրում է՝ «այստեղ կան հայերի հազար եկեղեցիներ և արաբական երկու մզկիթներ»²⁷:

9 Մանուվիլ անգլիացի ճանապարհորդը (ԺԴ դար), Ֆրանցիսկյան միաբանությունից, նույնպես հազար եկեղեցի է հիշատակում Անիում²⁸:

10 Ղրիմահայերի պատմություն-հիշատակարանը, որ գրել են տվել Արաբամ Պահլավունու զավակներ Տրդատն ու Աննան, 1690 թ. մի Հայաստանում (Մատենադարան, № 7442) վկայում է՝ «Մեծ թագաւորանիստ քաղաքն մեր Անի իշխանաց և ազնուականաց էր բնակութիւն... նաև ի նմա հազար ու մէկ եկեղեցիս...»²⁹:

11 «Պատմութիւն քաղաքին յԱնույ» երկի անանուն կազմողը, նշելով սելջուկների կողմից քաղաքի գրավման մասին, գրում է. «Եւ աներեցաւ քաղաքն բազմածողով, որ Ռ (1000) և Ա (1) եկեղեցի կայր ի նմա»³⁰:

²³ Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Չաքարյան Հայաստանի և Չաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 344:

²⁴ Հովհաննես Սկիլիցես (թարգմ. և ծանոթագրությունները՝ Հ. Բարթոկյանի), Երևան, 1979, էջ 371, ծան. 660:

²⁵ Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 90:

²⁶ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1934, էջ 27, ծան. 1, հմմտ. Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 90:

²⁷ Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 23: Ըստ Ղ. Ալիշանի, Ռուբրուքը նշում է 100 եկեղեցի: Հովհ. Հակոբյանն ու Ղ. Ալիշանն օգտվել են Ռուբրուքի երկի տարբեր հրատարակություններից: Առաջինն օգտագործել է լատիներեն բնագիրը և անգլերեն թարգմանությունը (ուստի մեզ ավելի արժանահավատ է թվում), երկրորդը՝ ֆրանսերեն թարգմանությունը («Ծիրակ», էջ 90):

²⁸ Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 90:

²⁹ Մատենադարան, № 7442, էջ 280—283, տե՛ս նաև Մ. Բժշկյան, Ծանապարհորդութիւն ի Էեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին շարագրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբ, Վենետիկ, 1830, էջ 335—342, Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 26—71:

³⁰ Մխիթար Անեցի, էջ 108: Գ. Ուլուհաջյանն այս վկայությունը սխալմամբ վերագրում է Մխիթար Անեցուն (նշվ. աշխ., էջ 393), մինչդեռ «Պատմութիւն քաղաքին յԱնույ» բնամեկնաբանությամբ:

որևէ մեկն անձամբ հաշվել է քաղաքի եկեղեցիները, բայց ակնհայտ է, որ ժամանակին Անին ունեցել է հազար եկեղեցի ունեցող քաղաքի հռչակ, և այդ թիվը կասկած չի հարուցել: Համեմատելիս մեր վկայակոչած հիշատակությունների հեղինակները այդ տեղեկությանն ակառնամբ թերահավատության ակնարկներ չեն անում:

Բարեբախտաբար մեր տրամադրության տակ են ոչ միայն հիշյալ վրկայությունները, այլև մի ամբողջ շարք օժանդակ փաստեր ու տեղեկություններ, որոնք էլ, մեր կարծիքով, հնարավորություն են ընձեռում պարզել Անիի 1000 եկեղեցիների առեղծվածը:

Նախ, ինչպես վերը տեսանք, քաղաքում իրոք բազմաթիվ էին եկեղեցիներն ու մատուռները, որոնք ոչ միայն առանձին կառույցների տեսք ունեին, այլև ժայռափոր էին, կամ տեղավորված պարսպաքորգերի մեջ: Մեծ թիվ էին կազմում նաև քաղաքի մերձակա վանքերի եկեղեցիներն ու մատուռները: Բայց անգամ այս ամենի հաշվառումով դժվար է ստանալ տասը հարյուրակ կազմող մի թիվ: Ուրեմն ո՞րն է գաղտնիքը:

Մեր կարծիքով խնդրի լուծումը «եկեղեցի» հասկացությանը ժամանակին տրվող մեկնաբանության մեջ է: Բանն այն է, որ եկեղեցի ասելով մասկացել են ոչ միայն առանձին եկեղեցական կառույցները, այլև մեկ եկեղեցու ներսում գտնվող պատարագի սեղան ունեցող խորանը կամ խորանները: Այս բանը պարզորոշ երևում է Անիի Ս. Փրկիչ եկեղեցու մի քանի վիմագրերի քննությունից: Հատակագծում բոլորածն, բազմախորան այս եկեղեցին կառուցող Աբղարիբ մարզպանը 1035 թ. շինարարական արձանագրության մեջ այն երբեմն եզակի թվով եկեղեցի է կոչում, երբեմն՝ հոգևակի թվով՝ եկեղեցիներ («եղի լուծ սպասատրաց եկեղեցոյս... եւ քահանա, որ մեռանի ի Սուրբ Փրկիչս Խ (40) մի կալցեն յեկեղեցիքդ եւ եթէ ոք ի քահանայից եկեղեցոյս...»³⁴: Իսկ դրանից կարճ ժամանակ անց 1041 թ., Ս. Փրկիչ եկեղեցուն նվիրատվություն կատարած Քրիստափորի արձանագրության մեջ որոշակիորեն խոսվում է չորս եկեղեցիների մասին՝ «Եւ Քրիստափոր... ի Սուրբ Փրկիչս ետու զիմ գանձագին հայրենիքս... եւ քահանայք Սուրբ Փրկչիս յամեն ամի ի չորս եկեղեցիքս՝ յեկեղեցին 9 (6) ար ժամ առնել անխափան...»³⁵: Ինչպես տեսնում ենք, Քրիստափորը Ս. Փրկիչ ընդհանուր անվան տակ հասկանում է չորս եկեղեցի: Իրողությունը վերջնականապես պարզում է մեկ այլ արձանագրություն: 1193 թ. Տրդատ քահանան, նորոգելով Ս. Փրկիչ եկեղեցին, նաև նշում է, թե «ընծայաբեր եղաք ի սա... նաեւ զգարդս սպասուց ի քառեսին խորանսս...»³⁶: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Ս. Փրկիչ եկեղեցու չորս խորանները, որոնք առանձին պատարագի սեղաններ են ունեցել, երբեմն նաև որպես առանձին եկեղեցիներ են դիտվել: Տեղին է հիշել, որ այս եկեղեցին կառուցվել է այն բանից հետո, երբ Աբղարիբ մարզպանը որպես պատվիրակ Կոստանդնուպոլիս գնալով՝ այնտեղից «շատ ջանիս եւ մեծածախ գանձիս» ձեռք է բերել Տերունական Խաչի մի մասունք, ապա վերադառնալով ձեռնարկել շինարարությունը. «... բերի մասն ի Սրբո Խաչէն եւ եկեալ կատարեցի գտանարս

³⁴ «Դիվան», Ա, էջ 46:

³⁵ «Դիվան», Ա, էջ 43: Ժողովածուում արձանագրության թվականը սխալմամբ նշված է ՆՂԹ, 1050, բայց իրականում գրված է «ի: ՆՂ: (1041) թ[ուին] ի թագաւորութեանն Սմբատա, որդո Գագկա Շահանշահի...»:

³⁶ Նույն տեղում, էջ 47:

Պատարագ խնդրող ամեն մի անեցի նվիրատու արձանագրության մեջ աշխատում էր նշել ոչ միայն մատուցվելիք պատարագների թիվը, օրը (տոնը), այլև տեղը՝ խորանը, եթե դրա անհրաժեշտությունը կար: Օրինակ, Ռաբան Քարիմադինը, Պապբան Վախրադինը և Դապտա Խաթունը Անիի «Քարիմադինի» եկեղեցու արձանագրության մեջ նշում են՝ «... փոխարեն հատուցին սպասաւորք եկեղեցոյս ար յերկուսին խորանին պատարագէն գՔրիստոս...»⁴⁴: Նույն բարեգործները, նորոգելով Անիի արվարձանի Կարմիր վանքը, պատարագներ են ստացել իրենց մերձավորների համար, դարձյալ նշելով խորանները՝ «Հայր Սարգիս եւ այլ եղբարքս փոխարեն հատուցին յամենայն շաբաթն ար Գ (Յ) խորանն՝ մեր հարն՝ Սարգսի եւ Սիթէ եւ Մարշէ...»⁴⁵: Իսկ Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ը պատերազմում զոհված եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի համար Մարմաշենի վանքի սպասավորներին պատվիրում է՝ «... աւագ խորանին պատարագն յանուն նահատակին Քրիստոսի՝ Խարփին կատարել յամենայն ար ի սկզբանէ տարոյն մինչեւ ցկատարումն տարոյն...»⁴⁶:

Այսպիսով բերված փաստերը վկայում են, որ պատարագի վայրի՝ խորանի հիշատակությունը ևս երբեմն կարևոր էր, պատարագի սեղան ունեցող խորաններն ինքնուրույն նշանակություն ունեին, հաճախ առանձին անուն էին կրում և կարող էին ուղղակի «եկեղեցի» կոչվել:

Իսկ ո՞րն էր այս երևույթի պատճառը, և արդյո՞ք շատ էին այդպիսի «եկեղեցի-խորանները»:

Պատարագներ մատուցվում էին ոչ միայն մահացածների, այլև կենդանի մարդկանց հոգու փրկության և մեղքերի թողության համար: Անիում այդպիսի օրինակները բազմաթիվ են: Վերը նշված 1041 թ. արձանագրության մեջ Քրիստափոր անունով անեցին հայտնում է, որ Ս. Փրկչի եկեղեցուն նվիրատվություն է կատարել և պատարագ ստացել՝ «վասն մեղաց... թողութեան եւ հոգւոյ փրկութեան»⁴⁷: Անեցիները «վասն փրկութեան հոգւոյ» եկեղեցի էին նորոգում⁴⁸, դրանց նվիրատվություն անում⁴⁹, պարսպի բուրգ կառուցում⁵⁰, հարկեր թողնում⁵¹, «վասն քաւութեան մեղաց» խաչքար կանգնեցնում⁵² և այլն: Ընդունված բան էր ամեն մեկի «հոգո բաժին» (հոգու պատվաստ, հոգու պահուստ, հոգու թոշակ) կոչված գումարը, կամ ունեցվածքը այս կամ այն եկեղեցուն նվիրելն ու փոխարենը համապատասխան չափով պատարագ ստանալը⁵³:

⁴⁴ Նույն տեղում, էջ 65:

⁴⁵ И. Орбели, Избранные... 474, Կ. Բաամանյան, նշվ. աշխ., էջ 87:

⁴⁶ Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 151:

⁴⁷ «Դիվան», Ա, էջ 43:

⁴⁸ Նույն տեղում, էջ 55:

⁴⁹ Նույն տեղում, էջ 12:

⁵⁰ Նույն տեղում, էջ 2, 5:

⁵¹ Նույն տեղում, էջ 27:

⁵² Նույն տեղում, էջ 40:

⁵³ Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու մի անթվական արձանագրության մեջ կարդում ենք. «Եւ Արքա ետու գիմ ոգո բաժին Ժ(10) դահեկան ի Սուրբ Աստուածածինս ի Սարգիս երեց, որ զՍրբո Խաչի պատարագն...» («Դիվան», Ա, էջ 50): Նույն եկեղեցու մեկ այլ արձանագրություն տեղեկացնում է. «Եւ Վարդա... վասն փրկութեան հոգո իմո եւ զուգակից իմ Ծոխին... տվաք զմեր հոգո պատուաստս ի յերկրորդ շէնս Աստուածածնիս. դակատ Խ(40) եւ պարտին սպասաւորք սորա ամի Զ(6) ար ժամ առնեն...» (նույն տե-

Նվիրատվությունների դիմաց ստացվող պատարագներն այնքան բազմաթիվ էին, որ առկա խորանները չէին բավականացնում, և անեցի ձեռներեց քահանաները հոգում էին նոր հնարավորությունների ստեղծման մասին, այն է՝ պատարագների համար օգտագործում էին եկեղեցիների ավանդատների փոքր խորանները, բազմախորան (բոլորաձև) եկեղեցիների զուգադիր խորանները, եկեղեցիներին կից կամ գերեզմանոցներում կառուցել տալիս պատարագի սեղանով փոքր մատուռներ («հոգեհանգստի մատուռներ» ինչպես կոչում է Թ. Թորամանյանը) և այլն: Անհում պատարագի խորանի ենք հանդիպում անգամ եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի հյուսիսային գավիթում⁵⁴, որը բացառիկ երևույթ է, քանի որ չի համապատասխանում գավիթի կոչմանը: Նույնպիսի հազվագյուտ իրողություն է մատուռի գոյությունը Անիի մի բնակելի տան մեջ: 1913 թ. այդ տունը պեղած Ն. Մագուրությունը Անիի մի բնակելի տան մեջ: 1913 թ. այդ տունը պեղած Ն. Մա-
 ուրը նշում է, որ Հայաստանում մինչ այդ նման բանի չի հանդիպել⁵⁵: Այսպիսով Անիում «շահաբեր» պատարագներ մատուցելու համար օգտագործվում էին բոլոր հնարավորությունները: Հարկ է նշել, որ այս երևույթը հատուկ չէր միայն Անիին, այլ ընդհանուր բնույթ ուներ: Բայց առևտրական խոշոր կենտրոն Անիում այն ավելի ընդգծված էր: Քաղաքում անգամ գոյություն ուներ հատուկ «հոգու հարկ», որն ամեն մի հանգուցյալի համար գանձվում էր նրա հարազատներից՝ կազմելով 11 դրամ (այդ հարկը 1216 թ. վերացրել է Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ը)⁵⁶:

Ծափահիտական նպատակներով պատարագի խորանների արհեստական բազմացումը այնպիսի չափերի էր հասել, որ Հայոց Եկեղեցու նշանավոր գործիչներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, ստիպված էր հրապարակավ բողոքել այդ երևույթի դեմ՝ գրելով. «... զի այս արդագալ ի տուրևառութիւն անկաւ շնորհս և ի թուականութիւնս քառասներորդաց որով գտաւ ի մէջ մեր անբերելի անկարգութիւն. զի մի ասացից՝ անօրէնութիւն. քանզի ծանուցեալ եկեղեցոյ վերակացութեան ըստ բազմութեան թոռոցն է և վարձն և ի պետս արծաթսիրութեան, բազմացուցին ի մի տեղ տասն՝ աւելի կամ պակաս ծակոտեալ մատրոնս խորանօք և սեղանովք. ըստ նմին և քահանայք թոռոցն լրացուցիչք և վարձսն առատացուցիչք: ... Ո՛վ աղետիցս, ո՛վ յիմարութեանս. յիսրայէլի միանգամ ի տարուջն մի քահանայ մտանէր արեամբ օտարաւ ի սրբութիւնսն և զամենայն ժողովուրդն քաւեր. իսկ մեք Քրիստոսի ամենայն աւուր վասն մեր պատարագելոյն յամենայն տեղիս՝ տկարացաք հաւատալ թէ քաւէ. այլ զնոյնն ի զանազան տեղիս և ի մի վարն անպատուեցաք և մատուցաք յանձուկ և անպատիւ ծակոտեալ խորանսն առանց սպասարորութեան սարկաւագի, առանց հպատակութեան դպրի, առանց անուշահոտութեան խնկի, առանց լուցման ջահի, որ ի հարցն մեր ամենայն սահմանեցաւ ի պետս նորին և ի կատարումն:

Զայսքան քարեկարգութեամբս զանց արարաք և միայն համարոցն ծա-

ղում): Անիի մեկ այլ եկեղեցում պահպանված արձանագրությունը վկայում է. «Գրեցաւ յիշատակարանս Ապուխանս իշխանի, որ տուեալ է զհոգո թոշակ ի սուրբ եկեղեցիս եւ պարտիս էղեալ շարաթնաւոր պատարագս...» («Դիվան», Ա, էջ 34, տես նաև նույն էջի հաջորդ և էջ 32-ի արձանագրությունները):

⁵⁴ Н. Мара, Ани, с. 74:

⁵⁵ Նույն տեղում, էջ 115:

⁵⁶ «Դիվան», Ա, էջ 14:

ռալք եղեալ՝ զպատարագելն և զհաղորդութիւն քահանայիցն ի միմեանց պառակտեցաք առանձին առանձին լինել և **գթիւն անեցուցանել...**»⁵⁷:

Կարծում ենք, պատկերը հստակ է, իսկ Լամբրոնացու բնորոշումը՝ «ծալոտեալ մատրունս խորանօք և սեղանովք», հենց այն իրողության արտացոլումն է, որը տեսանք Անիի մի շարք եկեղեցիներին ու դրանց վիմագրերին ծանոթանալով:

ԺԳ դարի սկզբներին Զաքարե ամիրսպաալարի դիմումին ի պատասխան Սսի եկեղեցական ժողովում ընդունված և Հայաստան ուղարկված կանոնական հանձնարարականի մեջ, առաջին իսկ կետում, ասվում է՝ «Մատուցանել զպատարագն սուրբ դպրաւ և սարկաւագաւ, որպէս օրէնն է»⁵⁸, որով հաստատվում է Լամբրոնացու ասածը նաև առանց պատշաճ սպասավորության մատուցվող պատարագների մասին: «Ասկէ կը հետեւի,—գրում է Մ. Օրմանյանը,—թէ այն բազմաթիւ խորշերու մէջ, որոնք մինչեւ այսօր եկեղեցիներու ատերակներու մէջ կը տեսնուին, յստակ պատարագի սեղաններով, առանց սպասավորութեան պատարագներ կը մատուցանէին»⁵⁹: Միջնադարյան բանիբուն հեղինակին և Հայ Եկեղեցու պատմաբանին լրացնում է նաև հայ եկեղեցական ճարտարապետության Անիին քաջածանոթ մասնագետը: Թ. Թորամանյանը մասնավորապէս գրում է. «Հայ կղերին՝ հոգւոյ փրկության համար պատարագներ ծախելու սովորությունը այնքան չափազանցվել է 11—12-րդ դարերուն, որ հանձն առնված պատարագներու թիվը լիակատար իրագործելու համար բավական չէին տարվոյն օրերը, ուստի ստիպված ամեն եկեղեցիներու մէջ ավելցուցել են խորաններ՝ ավանդատուններու վրա. կրկնահարկ շինել են ավանդատուններ հատկապէս այդ նպատակով: Կարծեք այդ ալ բավական չէ եղած, եկեղեցիի արևմտյան անկյուններուն վրա ալ շինել են հաճախ 2—4 սենյակներ՝ պատարագի խորաններով և վերանորոգել են հնադարյան արևմտյան սենյակներու սովորությունը, այս անգամ հիներեն բոլորովին տարբեր նպատակով մը»⁶⁰:

Այսպիսով, պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող պատմաշրջանում եկեղեցիներում ավագ խորանին զուգահեռ՝ այլ փոքր խորաններում, ավանդատներում, կից կառուցված մատուռներում ու սենյակներում պատարագի սեղան դնելն ու պատարագ մատուցելը շատ տարածված երևույթ էր: Բնական է, որ այն պետք է ավելի ծավալվել ու լայնորեն կիրառվել այնտեղ, ուր շատ դրամ կար և բազմաթիվ մարդիկ, որոնք «վասն հոգւոյ փրկութեան եւ մեղաց թողութեան» պատրաստ էին նվիրատվություններ կատարել ու փոխարենը «մեղսաքաւիչ» պատարագ ստանալ: Հենց այդպիսի վայր էր Անին, որը ոչ միայն «բիր բիրեց» բնակչություն ուներ, ազնվականների, վաճառականների, վաշխատուների ու այլ դրամատերերի բնակավայր էր, այլև մեծաթիվ ու ազդեցիկ քահանայական դաս⁶¹ ու հարյուրավոր եկեղեցիներ ունեցող քաղաք էր: Պետք է նկատի ունենալ նաև, որ նվիրատուները սովորաբար աշխատում էին պատարագ ստանալ եկեղեցական մեծ տոների օրերին, ուստի մրցակցությունն ավելի էր սրվում առաջ բերելով պատարագի նոր վայրերի պատրաստման անհրաժեշտությունը:

⁵⁷ Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 178—179:

⁵⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 169:

⁵⁹ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1573:

⁶⁰ Թ. Թորամանյան, հ. Ա, էջ 215:

⁶¹ Կ. Մաթևոսյան, Անի քաղաքի հոգևորականությունը, «Էջմիածին», 1993, ԺԱ—ԺԲ, 1994, Բ:

քաղաք այցելած հյուրերին: Թերևս այս է պատճառը, որ Անիի հազար եկեղեցիների մասին տեղեկությունը մեզ է հասել այդքան քաղմարթիվ աղբյուրներից, տարբեր ազգության պատկանող հեղինակների միջոցով: Նրանց մի մասը եղել են Անիում, մյուսները լսել են եկեղեցիների մասին, բայց լսել միանգամայն վստահելի աղբյուրներից, այդ պատճառով էլ մոռել են իրենց երկերի մեջ: Իսկ անեցիները, որոնք «Աստված վկա» ասելու պես երդվել են «Անիի հազար ու մեկ եկեղեցին վկա» խոսքերով, վստահ են եղել դրա ճշմարտացիության մեջ, հետևաբար քաղաքում իրոք կատարվել է նման մի հաշվարկ, մեր կարծիքով, ըստ «եկեղեցի-խորանների»:

Վերը, մեր կազմած «Անիի եկեղեցիների ցուցակից» արդեն տեսանք, որ քաղաքում վերգետնյա և ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները իսկապես պատկառելի թիվ են ունեցել, ընդ որում քաղաքի ու մերձակայքի ժայռափոր տարածքներն ամբողջովին չեն ուսումնասիրվել⁶⁴, անավարտ են մնացել բուն քաղաքի պեղումները, իսկ ընդարձակ արվարձանները միայն մակերեսային դիտարկումների են ենթարկվել: Մինչդեռ Անիի արվարձանների տարածական ընդգրկումը շատ մեծ էր: Թ. Թորամանյանն անգամ գրում է, թե «Անպայման Հոռոմեուսի վանքը, Բագնայր, Արջո Առինձ և անոնց նման 4-են մինչև 10 կիլոմետր հեռավորության վրա այժմ ավերակ գյուղեր Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական և տնտեսական գործերու հետ»⁶⁵: Քաղաքի արվարձանների տեղազննությունը կատարելուց հետո հեղինակը գալիս է այն եզրակացության, որ «այժմյան մեր տեսած պարիսպներեն (Սմբատաշեն, Կ. Մ.) դուրս էր բուն Անի քաղաքը, և պարիսպը քաղաքի ամրոցն էր»⁶⁶:

Ուրիշ ուսումնասիրողներ ևս չեն կասկածել, որ Անիի շուրջը, հատկապես հյուսիսային հարթավայրում, սփռված են եղել քաղմարտի քաղաքի արվարձանները: Բնական է, որ այստեղ ևս եկեղեցիներ ու մատուռներ կային, որոնց ավերակներն այժմ ծածկված են հողի տակ: Հուսանք, որ կգան բարի ժամանակներ, երբ Անիի ավերակներն ամբողջովին ու պատշաճ կերպով կուսումնասիրվեն և շատ գիտական հարցեր իրենց ճշգրտումը կստանան: Հավանորեն այն ժամանակ էլ վերջնականապես պարզ կդառնա Անիի հազար ու մեկ եկեղեցիների խնդիրը: Սակայն, ելնելով վերը կատարված քննությունից և առկա տեղեկությունների համադրումից, մենք գալիս ենք այն եզրակացության, որ **իր ծաղկման տարիներին Անին իրոք ունեցել է հազարից ավելի եկեղեցի ու մատուռ՝ պատարագի սեղանով խորան: Եկեղեցական մեծ տոների օրերին, կամ վտանգի պահին, այս բոլոր խորաններում պատարագ էր մատուցվում: Հենց սա էլ իրավունք էր տալիս անեցիներին իրենց քաղաքը «հազար ու մեկ» եկեղեցիների քաղաք կոչել, դրանով հրապարտանալ ու երդվել, իսկ մատենագիրներին՝ սերունդներին փոխանցել այդ իրողությունը:**

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

⁶⁴ 1915 թ. սկսված Անիի ժայռափոր տարածքների ուսումնասիրությունը 1916-ին ընդհատվել է Գ. Չուքինաշվիլու ցուցումով (որը ժամանակավորապես փոխարինում էր Ն. Մառին): Այս մասին ցավով է գրում դեպքերի մասնակից Ն. Տոկարսկին (Ղիփ. էջ 170):

⁶⁵ Թ. Թորամանյան, հ. Ա, էջ 328, տես նաև հ. Բ, էջ 180—181:

⁶⁶ Նույն տեղում: